

Մամուլի հաղորդագրություն

16 մարտի, 2016թ.

ՀԱՅՓ Փոփ-ափ պատկերասրահը ներկայացնում է

<<Հպարտաշուրթեր>> ժամանակակից հավաքական ցուցահանդեսը



Ապրիլի 8-18-ը

Ամեն օր, ժ.՝ 12:00 – 21:00

Մուտքն ազատ է

Բացման երեկո՝ ուրբաթ, ապրիլի 8-ին՝ 19:00 - 22:00

Գինու հյուրասիրություն Nouart Aznuni-ի կողմից

Սննդի հյուրասիրություն INGREDIENT-ի կողմից

### Ի՞նչ է ՀԱՅՓ Փոփ-ափ պատկերասրահը

ՀԱՅՓը շրջիկ պատկերասրահ է, որ ժամանակավոր ցուցադրություններ է կազմակերպում անկանխատեսելի վայրերում, ինչպիսիք են խանութի դատարկ տարածքները, վարձույթով տրվող տարածքները, լքված գործարանները: Մենք ցանկանում ենք ավելի լայն հնարավորություններ ստեղծել սկսնակ արվեստագետների համար և փոխել մոտեցումները արվեստի արժեքի և տարածության հանդեպ՝ դինամիկ մատուցման շնորհիվ բազմազան համայնք ներգրավելով:

### <<Հպարտաշուրթեր>> – ապրիլի 8-18-ը, 2016թ.

<<Հպարտաշուրթեր>> բառն առաջացել է լաբիա եզրույթի հայերեն տարբերակից՝ ամոթաշուրթեր կամ <<ամոթի շուրթեր>>: Այս մտահոգիչ եզրույթը պատկերացում է տալիս կանացի գրավչության և ամոթի վերաբերյալ ժամանակակից հասարակության ընկալումների մասին: Մեր նպատակն է անդրադառնալ վերոնշյալին և արվեստի ու կառուցողական քննարկումների միջոցով հակադրվել դրան:

Սա ՀԱՅՓ Փոփ-ափ պատկերասրահի 6-րդ ցուցադրությունն է, 2016թ. -ի 1-ին ցուցադրությունը: Ցուցադրությունը ներկայացնում է ավելի քան 20 արվեստագետների Հայաստանից և արտերկրից, ովքեր ներկայացնում են տարբեր ոլորտներ՝ լուսանկարչություն, գեղանկարչություն, վիդեո, պար, ինստալացիա և փորձարարական ներկայացում: Ցուցադրությունը նպատակ ունի ուսումնասիրել կանացիության ընկալումները և կանացի գրավչության մասին թյուր պատկերացումները կանանց աչքերով՝ տղամարդակենտրոն մշակույթի համատեքստում: Արվեստը հարցականի տակ կդնի սեքսի հետ կապված բարդ ու հաճախ հակասական էմոցիաներն ու տաբուները Հայաստանում: Տեսողական և կատարողական արվեստի գործերի թեմաներից հատկապես ցանկանում ենք առանձնացնել հետևյալները՝ <<մարմնի>> վերաբերյալ ընկալումները, սեռային առասպելներ և կարծրատիպեր, հասարակական խայտառակում, կանացի արժանապատվություն և իրավագործում:

Նախագծի կրթական բաղադրիչը ներառում է ելույթ ֆեմինիստական արվեստի պատմաբան Փանիս Մուսավի Նաթանցիի կողմից (Թեհրան, Իրան), ինչպես նաև աշխատանքային սեմինար և մասնագիտական քննարկում՝ Կանանց աջակցման կենտրոնի հետ համատեղ: Կրթական թեմաները վերաբերում են սեռական և վերարտադրողական առողջությանը, լեզվական խտրականությանը, հասարակական պատկերացումներին:

Այս ստեղծագործ նախագծի իրագործումը հնարավոր է դարձել CUMA Lab-ի ժամանակակից արվեստի ոլորտում շվեյցարական փոքր դրամաշնորհի միջոցով: Այն նպատակ ունի քննարկում սկսել մի թեմայի շուրջ, որ ճնշված է հանրային համընդհանուր ամոթի պատճառով և ձայնի իրավունք տալ այն մարդկանց, ովքեր հաճախ լռեցվում են:

Հետադարձ կապ  
ՀԱՅՓ Փոփ-ափ  
պատկերասրահ

Ընդհանուր հարցերի համար՝  
[info.hayp@gmail.com](mailto:info.hayp@gmail.com)  
[www.haypopup.com](http://www.haypopup.com)

Ստեղծագործական  
բովանդակության  
և գործառնությունների  
հարցերով՝

Աննա Կ. Գարգարյան՝  
համահիմնադիր,  
գործադիր և ստեղծագործական  
տնօրեն՝  
099.741.626  
[anna.gargarian@gmail.com](mailto:anna.gargarian@gmail.com)

Միջոցառումների և  
կազմակերպչական հարցերով՝

Շարլոտ Պուլեն՝  
համահիմնադիր, ծրագրերի  
ղեկավար և հաղորդակցության  
համակարգող  
077.177.452  
[ckpoulain@gmail.com](mailto:ckpoulain@gmail.com)



Schweizerische Eidgenossenschaft  
Confédération suisse  
Confederazione Svizzera  
Confederaziun svizra

**Swiss Cooperation Office  
South Caucasus**



**ARMENIAN  
INTERNATIONAL  
WOMEN'S  
ASSOCIATION**